

Կրոնական կազմակերպությունների մասին միջազգային զեկույց 2012

Հայաստան

Հրապարակվել է 20 մայիսի, 2013թ.

Ամփոփիչ ակնարկ

Մահմանադրությունը պաշտպանում է կրոնական ազատությունը, սակայն որոշ օրենքներ և հայեցակարգեր սահմանափակում են կրոնական ազատությունը: Եղել են հաղորդումներ կրոնական ազատության ոտնահարումների վերաբերյալ: Օրենքը որոշակի արտոնություններ է շնորհում Հայաստանյայց առաքելական եկեղեցուն, որոնք չեն գործում մյուս կրոնական խմբերի համար: Գրանցված կրոնական խմբերի գերակշիռ մասը նշում են, որ իրենց գործունեության հետ կապված զգալի իրավական սահմանափակումներ չեն եղել: Այնուհանդերձ, ըստ Եհովայի վկաների, իրենց անդամներից 31-ը դեռ շարունակում էին մնալ անազատության մեջ՝ կրոնական նկատառումներով պարտադիր զինվորական կամ այլընտրանքային աշխատանքային ծառայությունից հրաժարվելու համար: Կրոնական ազատության հարգանքի մասով կառավարության կողմից դրսևորվող միտումը տարվա ընթացքում զգալի փոփոխություններ չի կրել:

Եղել են հաղորդումներ կրոնական պատկանելության, հավատքի և գործունեության հիման վրա հասարակական չարաշահումների և խտրականության վերաբերյալ: Փոքրամասնական կրոնական խմբերի անդամները զգացել են խտրականություն և անհանդուրժողականություն հասարակության կողմից, այդ թվում և աշխատավայրում: Բազմաթիվ լրատվամիջոցներ ցուցաբերել են կողմնակալ վերաբերմունք փոքրամասնական կրոնական խմբերի դեմ:

ԱՄՆ դեսպանության պաշտոնյաները խրախուսել են կրոնական ազատությունն ու միջդավանական երկխոսությունը հրապարակավ, ինչպես նաև պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում: Դեսպանատունը հորդորել է կառավարության ընդունել միջազգային չափանիշներին համապատասխանող նոր օրենք այլընտրանքային ծառայության մասին՝ խղճի նկատառումներով զինծառայությունից հրաժարվողների համար:

Մաս I. Կրոնական ժողովրդագրությունը

2011թ. մարդահամարի նախնական արդյունքներով ազգաբնակչությունը կազմում է 2.8 միլիոն: Քաղաքացիների մտավորապես 90 տոկոսը հարում է Հայաստանյայց առաքելական եկեղեցուն: Մյուս կրոնական խմբերը, որոնցից յուրաքանչյուրը կազմում են բնակչության հինգ տոկոսից պակաս մասը, ներառում են. կաթոլիկներ՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու և Հայկական Մխիթարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ, հայ-ավետարանական եկեղեցու անդամ քրիստոնյաներ, մոլդկաններ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաների տարբեր խմբեր, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու անդամներ (մորմոններ), եզդիներ, հրեաներ, սունի մահմեդականներ, շիա մահմեդականներ և հեթանոսներ: Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում: Հրեաների մեծ մասը, մորմոններն ու ուղղափառ քրիստոնյաները, ինչպես նաև մահմեդականների փոքրիկ համայնքը՝ հիմնականում շիա մահմեդականներ՝ ներառյալ իրանցիներ և ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից, բնակվում են Երևանում:

Մաս II. Կրոնական ազատության հանդեպ հարգանք կառավարության կողմից

Իրավական/հայեցակարգային դաշտ

Մահմանադրությունը պաշտպանում է կրոնական ազատությունը, սակայն որոշ օրենքներով և հայեցակարգերով կան կրոնական ազատության սահմանափակումներ: Կրոնական խմբերի ոլորտը կարգավորող օրենքը ոչ պետական կազմակերպությունների գրանցման բացահայտ պահանջ չի դնում, սակայն միայն գրանցված խմբերն են, որ ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Զգրանցված խմբերը չեն կարող հրատարակել 1000-ից ավել տպաքանակով թերթեր ու ամսագրեր, վարձակալել տարածք ժողովների համար, հեռարձակել հաղորդումներ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, կամ պաշտոնապես հովանավորել իրենց այցելուների համար վիզաների ստացումը, չնայած անդամները դա կարող են անել որպես անհատ: Գրանցման պայմաններին բավարարելու համար կրոնական խմբերը պետք է «զերծ լինեն նյութապաշտությունից և ուղղված լինեն դեպի գուտ հոգևոր ոլորտներն», ունենան առնվազն 200 հոգի չափահաս անդամներ և առաջնորդվեն «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» ուսմունքով: Գրանցման պահանջները չեն վերաբերում ազգային փոքրամասնությունների հետ կապ ունեցող կրոնական խմբերին, չնայած շատերը նախընտրել են գրանցվել: Կրոնական խմբերի գրանցումն իրականացվում է Պետական ռեգիստրում: Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչությունը հետևում է կրոնական հարցերին և կատարում է փորձագիտական դեր գրանցման գործընթացում:

Մահմանադրությունը և օրենսդրությունը սահմանում են եկեղեցու և պետության տարանջատումը, սակայն ճանաչում են «Հայաստանյայց առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»:

Օրենքը որոշակի արտոնություններ է շնորհում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, որոնք չեն գործում մյուս կրոնական խմբերի համար: Օրինակ՝ եկեղեցին կարող է ունենալ մշտական ներկայացուցիչներ հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, զորամասերում, և ազատագրված վայրերում, մինչդեռ մյուս կրոնական խմբերը կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն այդպիսի խնդրանք լինելու դեպքում:

Օրենքն արգելում է «հոգեբուությունը», սակայն չի սահմանում «հոգեբուություն» եզրույթը, որն օգտագործվում է բնութագրելու թե՛ դավանափոխությունը, և թե՛ հարկադիր կրոնափոխությունը: Արգելքը վերաբերում է բոլոր կրոնական խմբերին, այդ թվում և Հայաստանյայց առաքելական եկեղեցուն: Օրենքով սահմանվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է: Այնուհանդերձ, Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմությունը ներառված է հանրակրթական առարկայացանկում և դասավանդվում է հանրակրթական դպրոցի ուսուցիչների կողմից: Եկեղեցին իրավունք ունի մասնակցել այդ առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքերի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Եկեղեցին կարող է նաև առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել: Առարկան պարտադիր է. աշակերտները չեն կարող չհաճախել այդ առարկայի դասերին, և այլ կրոնական խմբերի աշակերտների համար առկա չեն այլընտրանքներ: Բացի այդ, օրենքը Հայաստանյայց առաքելական եկեղեցուն իրավունք է շնորհում կազմակերպել կրոնի ուսուցման կամավոր արտաձրագրային դասընթացներ պետական կրթականըմիաստատություններում: Մյուս կրոնական խմբերը կարող են իրենց անդամներին կրոնի դասեր տալ իրենց պատկանող հաստատություններում: Օրենքը թույլ է տալիս խղճի նկատառումներով զինվորական ծառայությունից խուսափող անձանց, պետական թույլտվությամբ, երկու տարի տևողությամբ մարտական զինվորական ծառայության փոխարեն անցնել 36 ամիս տևողությամբ ոչ-մարտական զինվորական կամ 42 ամիս տևողությամբ աշխատանքային ծառայություն: Օրենքը նաև քրեականացնում է այլընտրանքային աշխատանքային ծառայությունից խուսափելը:

Քրեական օրենսդրությամբ արգելվում է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության սերմանումը: Օրենսդրությամբ արգելվում է արտերկրում հոգևոր կենտրոններ ունեցող եկեղեցիների ֆինանսավորումն արտերկրից: Կառավարության կողմից որպես ազգային տոն նշվում է հունվարի 6-ը, այն օրը, երբ Հայաստանյայց առաքելական եկեղեցին տոնում է Սուրբ Ծնունդը: Տարվա ընթացքում կառավարության որոշմամբ հինգ եկեղեցական տոների հետ կապված երկուշաբթի օրերը պաշտոնապես հայտարարվում են ոչ աշխատանքային: Դրա փոխարեն նախորդ կամ հաջորդ շաբաթ օրը հայտարարվում է աշխատանքային օր: Կառավարության գործունեությունը: Եղև են հաղորդումներ երկրում կրոնական ազատության չարաշահումների մասին, այդ թվում նաև ազատագրված: Գրանցված կրոնական խմբերի գերակշիռ մասը նշում են, որ իրենց գործունեության հետ կապված գալիս իրավական սահմանափակումներ չեն եղել:

Խղճի նկատառումներով զինվորական ծառայությանը դեմ անձանցից շատերն անընդունելի են համարում այլընտրանքային աշխատանքային ծառայության հանդեպ զինվորական հսկողությունը: Ըստ Եհովայի վկաների՝ տարվա ընթացքում զինվորական և այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար դատապարտվել են 8 Եհովայի վկաներ, ովքեր կրում էին իրենց պատիժը: Ութից 4-ը դատապարտվել են ազատագրված 24 ամիս ժամկետով, իսկ մնացած 4-ը՝ 30 ամիս ժամկետով: Եհովայի վկաներ դատապարտվել էին և ստացել 24 կամ 30 ամսյա ազատագրված վճիռներ, սակայն նրանք դեռ գտնվում էին ազատության մեջ՝ ապաստելով բողոքարկման արդյունքներին: Նմանատիպ մեղադրանքներով ևս 17 հոգու նկատմամբ կային գործեր, որոնք դեռևս քննության մեջ էին գտնվում, իսկ 9-ը հոգու դեմ հարուցված գործերն արդեն ընթացքի մեջ էին առաջինատյանի դատարաններում: Եհովայի վկաների հաղորդմամբ տարեվերջի դրությամբ կրոնական նկատառումներով Պաշտպանության նախարարության ներքո ընթացող զինվորական կամ այլընտրանքային աշխատանքային ծառայությունից հրաժարված Եհովայի վկաների 31 անդամներ գտնվում էին բանտում: Կառավարությունը Հայաստանյայց առաքելական եկեղեցու 20 հոգևորականների ազատել է պարտադիր զինվորական ծառայությունից, իսկ հոգևոր ճեմարանի 85 ուսանողների համար տրվել է զինվորական ծառայության տարկետման իրավունք:

Հունվարի 16-ին վերաքննիչ դատարանը հաստատեց Եհովայի վկա Անդրանիկ Մակվեցյանի դատաժյուր, որով նա դատապարտվել էր Հայաստանյայց առաքելական եկեղեցու քահանայի եկեղեցու մոտակայքում «քարոզչության իրավունքը» խախտելու և նրա՝ Մակվեցյանի կողմից հոգեբուություն կատարելը «կանխելու իրավունքը» ոտնահարելու համար: Դիտորդները նշում էին, որ օրենքը չի սահմանում նման իրավունքներ: Մակվեցյանը կրեց վեցամսյա ազատագրված պատիժը և ազատ արձակվեց:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ Եհովայի վկաների համաժողովներն անցել են առանց խաչընդոտների պետական պաշտոնյաների կողմից: Փետրվարի 18-ին Հայաստանյայց առաքելական եկեղեցու ներկայացուցիչների հետ կլոր սեղանի ընթացքում Կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը հայտարարեց, որ հանրակրթական դպրոցներում Եկեղեցու պատմություն առարկան դասավանդող ուսուցիչները կարող են դպրոցներում նաշխատել միայն եկեղեցու Մայր Աթոռի թույլտվությամբ և վերջինս պետք է նաև ապահովի ուսուցիչների վերապատրաստումը: Ըստ հաղորդումների Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը գործնականում արդեն իսկ պատասխանատու էր ուսուցիչների վերապատրաստման համար:

Հուլիսին «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հրապարակեց զեկույց հանրակրթական դպրոցներում կրոնական կրթության վերաբերյալ՝ զբաղակազմով, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմություն առարկայի ուսումնական պլանն ու դասագրքերը ավելի շատ միտված են եկեղեցու հավատքին, քան եկեղեցու պատմությանը: Ըստ զեկույցի դասերը ներառել են եկեղեցական ծիսակատարությունների որոշ տարրեր, դասերի ընթացքում ատելություն է սերմանվել այլ կրոնական կազմակերպությունների հանդեպ, և դասերը ուղղված են եղել աշակերտների կրոնական դաստիարակությանը: Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի զեկույցում մեջբերված էին դպրոցների տնօրենների և առարկան դասավանդող ուսուցիչների հետ հարցազրույցներից հատվածներ, որտեղ ոմանք նշում էին, որ այդ առարկայի նպատակն է աշակերտներին դաստիարակել որպես «ճիշտ» քրիստոնյաներ, հեռու պահել նրանց «աղանդներից», մոտեցնել Հայաստանյայց առաքելական եկեղեցուն և սովորեցնել նրանց, որ մյուս կրոնները մասնատում են ազգը:

Հուլիսի 31-ին առաջին ատյանի դատարանը մերժեց «Կյանքի խոսք» եկեղեցու և վերջինիս ավագ հովիվ Արթուր Սիմոնյանի զբաղատության ու վիրավորանքի մասին հայցն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Առգումենտի նիդելի վ Արմենիի » պարբերականների և համահայցվորներից պահանջեց 300,000 ՀՀ դրամ (739 ԱՄՆ դոլար) վճարել՝ հատուցելու պարբերականների կրածիրավական ծախսերը: 2011թ. երկու պարբերականները հողվածներ էին հրապարակել՝ ակնարկելով կապեր եկեղեցու ու պոռնկագրության միջև: Մայիսի 11-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը, որի կազմում ներառված են անկախ լրատվական

փորձագետներ, ովքեր կամավոր հիմունքներով ապահովում են փորձագիտական գնահատականներ զրպարտության դեպքերի հետ կապված, եզրակացություն ներկայացրեց առ այն, որ փաստական տվյալների բացակայությունը հողվածներում շարադրանքը դարձնում է վիրավորական, իսկ «աղանդ» բառի հաճախակի գործածումը կրոնական ատելության սերմանում է հանդիսանում: Նոյեմբերի 8-ին վերաքննիչ դատարանը անփոփոխ թողեց առաջին ատյանի դատարանի որոշումը՝ համահայցվորներից պահանջելով իրավական ծախսերի համար վճարել ևս 100,000 ՀՀ դրամ (246 ԱՄՆ դոլար): Հոկտեմբերի 23-ին «Իրավունքի» նախկին գլխավոր խմբագիրը, ով ներկայումս Ազգային ժողովի պատգամավոր է, հայտարարություններ արեց, որոնցում «Կյանքի խոսք» եկեղեցուն բնութագրում էր որպես «ապօրինի և հակահասարակական գործունեություն իրականացնող տոտալիտար աղանդ»: Լրատվամիջոցի կայքում կա հղում, որը վերնագրված է «STOP կյանքի խոսք»: Օտարերկրյա կրոնական խմբերի արտաքին ֆինանսավորման արգելքը կառավարության կողմից չի իրականացվել: Երևանի քաղաքապետարանը որոշակի ջանքեր գործարքեց քաղաքով մեկ պատերին ու սյուներին փակցված փոքրամասնական կրոնական խմբերին դատապարտող թերթյուններն ու պատասխանները մաքրելու ուղղությամբ: «Մեկ ազգ կուսակցություն» անվամբ հանդես եկող խմբի կողմից փակցվող նյութերը շարունակում էին վերստին հայտնվել, և ըստ հաղորդումների, խումբը իրականացնում էր նաև թերթյունների առձեռն բաժանում՝ մետրոյի կայարաններում և բնակելի շենքերում:

Մաս III. Հասարակության հարգանքը կրոնական ազատության իրավունքի նկատմամբ

Եղել են հաղորդումներ կրոնական պատկանելության, հավատքի և դավանանքի հիման վրա հասարակական խտրականության վերաբերյալ: Փոքրամասնական կրոնական խմբերի հաղորդումների համաձայն իրենց անդամների նկատմամբ եղել են խտրական վերաբերմունքի և անհանդուրժողականության դրսևորումներ հասարակության կողմից, այդ թվում նաև աշխատավայրերում, չնայած, պատկան մարմիններին սակավաթիվ խմբեր են բողոքներ ներկայացրել այդ մասին: Շատ լրատվամիջոցներ հանդես են բերել կողմնակալություն ընդդեմ փոքրամասնական կրոնական խմբերի: Շատ լրատվամիջոցներ շարունակել են փոքրամասնական կրոնական խմբերին պիտակել որպես «աղանդներ» և քարոզել են վախենալ կրոնական փոքրամասնություններից: Տարբեր հեռուստաընկերություններ շարունակել են ներկայացնել քննարկումներ և լրատվական թողարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները փոքրամասնական կրոնական խմբերին պիտակել են որպես պետության թշնամիներ: Հեռարձակող լրատվամիջոցների գերակշիռ մասը պատկանում էին իշխանական կուսակցության քաղաքական գործիչներին կամ քաղաքական կապեր ունեցող գործարարներին: Լրատվամիջոցները հրապարակել են ոչ ճշգրիտ հոդվածներ, որտեղ կրոնական փոքրամասնություններին ներկայացրել են որպես հանցագործներ և լրտեսներ: Սակայն տեղական իտորդները և կրոնական խմբերը նշում են, որ կրոնական փոքրամասնությունների մասին լուսաբանումը նախորդ տարվա համեմատ նվազ վիրավորական է եղել: Հունիսի 5-ին դատարանի կողմից համաձայնեցված հաշտությունից հետո 21 հանրային հեռուստաընկերությունը հերքում ներկայացրեց 2010թ. իր այն հաղորդումների վերաբերյալ, որտեղ կեղծ կապ էր ներկայացվում տարեց ծնողներին դաժանաբար սպանած երիտասարդի և Եհովայի վկաների միջև: Որոշ փոքրամասնական կրոնական խմբեր քննադատել են Հայաստանյայց առաքելական եկեղեցու որոշ քահանաների պահվածքը՝ այն որակելով որպես չափից դուրս ագրեսիվ: Հուլիսի 31-ին մի քահանա հարձակվել էր Եհովայի վկաների վրա, ովքեր Օձուն գյուղի տներից մեկում քննարկում էին Աստվածաշունչը: Ըստ հաղորդման քահանան հավաքել է տղամարդկանց մի խումբ, ովքեր հայեցող են Եհովայի վկաներին: Երբ Եհովայի մյուս վկաները եկել են հանդարտեցնելու իրավիճակը, քահանան հանել է իր խաչն ու ֆիզիկական հարձակում գործել նրանց վրա: Ոստիկանության միջամտությունից հետո քահանան ներողություն է խնդրել իր արարքների համար և պատրաստակամություն հայտնել փոխհատուցում վճարել վնասների համար:

Մաս IV. ԱՄՆ կառավարության քաղաքականությունը

ԱՄՆ դեսպանը, Դեսպանության ներկայացուցիչներն ու այցելող պաշտոնյաները հրապարակավ և պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում խրախուսել են կրոնական ազատությունը և միջավանական երկխոսությունը: Դեսպանության պաշտոնյաները շարունակել են քաջալերել կառավարությանն ընդունել միջազգային չափանիշներին համապատասխանող այլընտրանքային ծառայության մասին նոր օրենք խղճի նկատառումներով գինվորական ծառայությունից խուսափողների համար: Բացի այդ ԱՄՆ դեսպանության պաշտոնյաներն աշխատել են կրոնական ու քաղաքացիական հասարակության առաջնորդների հետ կրոնական հանդուրժողականությունը խթանելու ուղղությամբ: